քաղաք Հրազդան 27 Մարտ 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հրազդան համայնքի մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի նիստին ներկա էին հանձնաժողովի 6 անդամներ:

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ Վահան Մեսրոպյանը:

Նիստը արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար՝ Վանուհի Բարեղամյանը:

Նիստի ընթացքում քննարկվեց և ամփոփվեց առաջարկ-նախագծերի՝ մարտի 11-ից մարտի 26-ը ներառյալ, քվեարկության արդյունքները:

Քվեարկության փուլ անցած 5 նախագծերի քվեարկությանը մասնակցել էին ավելի քան 400 բնակիչ: Արդյունքում՝ 1. «Հայկ Բարսեղյան» արվեստանոց՝ 404 ձայն, 2.Սահմանադրության հրապարակի բարեկարգում՝ 14 ձայն, 3. Հրազդան համայնքի առաջին մոդուլային գրադարանը՝ 204 ձայն, 4. «Օդապարիկների կայարան»՝ 77 ձայն, 5. Խաղահրապարակի կահավորում՝ 404 ձայն:

Իրագործման փուլ անցան 2 նախագիծ՝ «Հայկ Բարսեղյան» արվեստանոց և Խաղահրապարակի կահավորում ծրագրերը՝ ստանալով հավասար ձայներ:

Սույն թվականի ապրիլի 1-ից կմեկնարկի ընտրված նախընտրելի ծրագրերի պլանավորման գործընթացը:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Վահան Մեսրոպյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ-զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյան_____

Сканировано с CamScanner